

18) DR. P. ROHRBACH "In Trans und Armenien auf den Pfaden russischer Weltpolitik".—Դ-ր Ռորբախ. "Տուրքական և Հայաստանում և Հայաստանում—ռուսաց համաշխարհային քաղաքականութեան հետքով":

Գերմանացի ճանապարհորդների շարքում վերջին տարիներս մի պատկառելի տեղ է գրաւել աստուծաբանութեան գոկտօր Ռորբախը: Նա իր ճանապարհորդութիւնների ասպարեզ է ընտրել առաջաւոր Ասիան և միշտ էլ կարողանում է տալ ընթերցողներին հետաքրքրաշարժ նկարագրութիւններ, քաղաքական դիտողութիւններով համեմուած:

Այս գրքի մէջ նա նկարագրում է իր ճանապարհորդութիւնը դէպի Կովկաս, Անդրկասպեան երկրը՝ Սամարկանդ, Բուխարա և Մերք: Նա հակիրճ կերպով պատկերացնում է իւրաքանչիւր երկրի և ազգաբնակութեան առանձնայատկութիւնները, տեղ-տեղ կանդ առնելով քաղաքական-սօցիալական հանգամանքների վրայ:

Նրա կարծիքով ռուսաց ազգեցութիւնն ու իշխանութիւնը աւելի ուժեղ է Անդրկասպեան երկրում, քան թէ Կովկասում, քան թէ վրացիների ու հայերի մէջ: Այդ աջողութեան պատճառը ուստաների չափաւոր քաղաքականութիւնն է մահմեդականների վերաբերմամբ: Ռուսաստանը միշտ աշխատել է չկրգուել հպատակ մահմեդականների մոլեուանդութիւնն ու ատելութիւնը իր դէմ, միշտ խոյս է տուել անհամբերատարութիւնից ու խիստ միջոցներից:

Այդպիսի քաղաքականութիւնն ունի իր հեռաւոր նպատակները: Ռուսաստանը ձգտում է դէպի Հնդկաստան, դէպի ովկիանոս և հէնց զրա համար էլ նա նախապարհաստում է իր ճանապարհը: Այդ ճանապարհի վրայ ընկած է մահմեդական ազգաբնակութիւնը, ուրեմն խելացիութիւն չէ նրա հետ թըշնամիանալը, նրա կրօնական զայրոյթը գրգռելը:

Այդ հեռաւոր նպատակը բաւական խոշոր դեր է խաղում նաև ոռուս-թրքական յարաբերութիւնների մէջ: Սակայն այդ դեռ բոլորը չէ: Ռուսաստանի տնտեսական կեանքը օրէցոր զարգանում է: Նրա արդինապործութիւնը կարիք է զգում նորանոր շուկաների: Ահա այդ կարիքն է, որ մզում է Ռուսաստանին դէպի հարաւ ու արեւելք, դէպի Պարսկաստան, Չինաստան ու նոյն իսկ թիւրքիա:

Այդպիսի պայմաններում նա չի կարող թեթև պատճառով թշնամանալ սուլթանի հետ, որովհետև այդ դէպրում առաջ կը գայ միւս պետութիւնների միջամտութիւնը, ասպարէզի վրայ

կը գրուի չարաբաստիկ «արեւելեան հարցը», որոնք և վնաս կը հասցնեն վերոյիշեալ խաղաղ ճգուտմներին:

Այդքանը սուսաց քաղաքականութեան մասին, Գալով նկարագրութեան միւս նիւթերին, պէտք է ասել, որ զլսաւոր տեղը բռնում են հայերը:

Յարգելի հեղինակը համառօտակի պատկերացնում է հայերի վիճակը կովկասում, նրանց կատարած անտեսական դերը, նրանց կուլտուրական առաջադիմութիւնը ևայլն:

Ներկան աւելի պարզելու համար նա անցնում է անցեալին, առաջ է քաշում Հայոց հին պատմութիւնը և շեշտում է, թէ հայերը ամբողջ դարերի ընթացքում դիմացել են անվերջ հալածանքների, ունեցել են մարտիրոսական կեանք, բայց իբրև ամի՞ կղզի բռնութեան մեծ ովլիանոսում մնացել են «կենսուշնակ, քաղաքակիրթ և քրիստոնեայ ազգ»:

Պ. Տօրբախ առաջ է բերում իր տեսակցութիւնը Կաթողիկոսի հետ: Նօրբախը մի տեղ նկատում է.

—Հայերին նմանեցնում են հրէաներին: Ասում են, որ հայ ազգը խաբերայ վաճառական է... բայց սխալ է: Հայը զուտ երկրագործ ժողովուրդ է, որ ապրում է իր արտերի, այդիների և հօտերի արդիւնքով... Շատ քիչ են այն քաղաքները, որտեղ հայ ազգաբնակութիւնը մի մեծ թիւ է կազմում... Հայը զիւղումն է: Գիւղ պէտք է գնալ նրան տեսնելու համար...

Հեղինակը խօսում է նաև հայ հոգեւորականութեան մասին ընդհանրապէս և յայտնում է, որ նրա մէջ կան շատերը եւրոպական հիմնաւոր կրթութեամբ:

Վերջում նա տալիս է Անիի աւերակների նկարագրութիւնն ու չարաբախտ պատմութիւնը, աւելացնելով,

—Անիի կործանման հետ մայր մտաւ հայի արեւը, Ամբողջ երկրում թագաւորեց խաւարը, որը մնում է մինչև այժմ: